ՎԱՉԱԳԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕՏԱՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ԱՊՀ երկրներում հասարակական կյանքի արմատական վերափոխումները սկսվեցին տնտեսության, ապապետականացման ու սեփականաշնորհման գործընթացներով: Նախկին ԽՍՀՄ-ի տնտեսության մեջ մանր մասնավոր սեփականությունը սկզբնապես ի հայտ եկավ վերակառուցման շրջանում, այսպես կոչված, "անհատական աշխատանքային գործունեության" ձևով: Վերակառուցման տարիներին ձևավորվեցին կոոպերատիվներ, որոնց անդամներն ունեին սեփականատիրոջ կամ ձեռնարկատիրոջ կարգավիճակ, իսկ հիմնական արտադրական գործառույթները կատարում էին վարձու աշխատողները:

ԱՊՀ երկրներում կազմավորված մասնավոր սեփականությունն աչքի է ընկնում հետևյալ առանձնահատկություններով: Առաջինը, մասնավոր սեփականատերերը և ձեռնարկատերերը կողմնորոշված են դեպի տնտեսական վարքի չինովնիկական-բյուրոկրատական և կիսալեգալ մոդելը: Ներկայումս սեփականատերը, որը ծանրաբեռնված, ճնշված է մեծ չափերի հասնող հարկերով և իր գործերում մշտապես բախվում է ամեն տեսակի բյուրոկրատական քաշքշուկի հետ, հարկադրված է ընթանալ անօրինական ճանապարհով /թաքցնել հարկերը, կաշառք տալ պետական չինովնիկներին/, որպեսզի ապահովի իր գոյությունը ժամանակակից տնտեսության մեջ: Երկրորդ, ԱՊՀ երկրներում մասնավոր ձեռնարկատիրության համար բնութագրական է տարբեր կորպորատիվ կառուցվածքների միջև և դրանց ներսում գործող ոչ ֆորմալ սոցիալ-տնտեսական կապերի վիթխարի նշանակությունը: Այդ կառուցվածքների ինքնուրույնության և մրցունակության մակարդակը էապես այլ է, քան ավանդական շուկայական տնտեսության մեջ: Երրորդ, անփոփոխ է մնացել աշխատողների և մնացած քաղաքացիների օտարացումը սեփականությունից, որը պատկանում է մասնավոր անձանց /հիմնականում նոմենկլատուրային-կորպորատիվ և "ոչ ֆորմալ" կառուցվածքներին, խոշոր հանցախմբերին, որոնք գործում են տնտեսության և ձեռնարկատիրության ոլորտում, հարստացած կառավարական վերնախավին/: Այդ անձանց ազդեցությունն էապես բարձր է, քան զարգացած

կապիտալիստական երկրների պայմաններում: Բացի այդ, թույլ են զարգացած կամ, ընդհանրապես բացակայում են ժողովրդավարական հսկողության ձևերը, մասնակցությունը կառավարմանը և այլն:

Ներկայումս մասնավոր սեփականության շրջանակներում օտարացման հարաբերությունները զարգանում են ոչ միայն որպես տնտեսական օտարացում, հիմնվում են ոչ միայն որոշակի անձանց ձեռքում լիազորությունների կենտրոնացման վրա, այլ այդ հարաբերությունները զարգանում են նաև արտատնտեսական օտարացման տարբեր ձևերով, որոնք պահպանվում են տնտեսության բյուրոկրատական կազմակերպման հիման վրա: Այդ առանձնահատկությունը ձևավորում է մասնավոր սեփականության առանձնահատուկ տիպ, որը բնութագրական է անցումային տնտեսությունների համար:

Արդյունաբերական արտադրության օբյեկտների վաուչերային սեփականաշնորհումը, որը նպատակ ուներ "ոչ մեկին չպատկանող" սեփականությունը փոխանցել սեփականատերերին, որպեսզի, ձեռք բերելով "տիրոջ զգացում", նրանք բազմակի անգամ բարձրացնեին սեփականության օգտագործման արդյունավետությունը ցույց տվեց այդ սկզբունքների լրիվ բացակայությունն ու կեղծությունը:

Սեփականության հարաբերությունների բարեփոխման 13-ամյա շրջանը հանգեցրեց հետևյալ հետևանքների.

- չեն կատարվել սեփականաշնորհման հիմնական նպատակները: Սոցիալական ոլորտում՝ խորացել է աշխատողների օտարվածությունն արտադրության միջոցներից և աշխատանքի արդյունքներից, տնտեսական ոլորտում՝ ձևավորվել է անարդյունավետ, այսպես կոչված, ինսայդերյան սեփականություն և կեղծ բաժնետիրական սեփականություն՝ որպես ստվերային կոռումպացված ոչ քաղաքակիրթ շուկայական տնտեսության հիմք:
- պետական ունեցվածքի գերակշիռ մասը փոշիացվել, թալանվել է;
- աննախադեպ կերպով աճում է բնակչության ունեցվածքային շերտավորումը;
- ոչ պետական սեկտորը կարճ ժամանակամիջոցում դարձել է տիրապետող տնտեսության ընդհանուր կառուցվածքում, ինչը հանդիսանում է տնտեսական և սոցիալ-քաղաքական վերափոխումների անդառնալիության կարևորագույն նախադրյալը:

Հասարակական սեփականությունը, որ նախկինում ամբողջովին կենտրոնացած էր պետական սեկտորում, ապապետականացման շնորհիվ անցել ու կենտրոնացել է փոքրաքանակ մեծահարուստ սեփականատերերի և, այսպես

կոչված, օլիգարխների ձեռքում:[1] Բնականաբար, նման սեփականաշնորհումը ոչ միայն մենաշնորհականացրեց տնտեսական կյանքը, այլ նաև արգելակեց տնտեսական այն սուբյեկտների մուտքը հասարակական կյանք, որոնք շահագրգռված էին սեփականաշնորհված ձեռնարկությունների վերականգնմամբ ու բարգավաճմամբ: Էլ չենք խոսում շարքային քաղաքացիների մասին, որոնք, պարզապես, "արտաքվեցին" տնտեսական կյանքից, նրանց բաժին հասավ հասարակության հետնաբակերում իր գոյությունը քարշ տվող օտարացած լումպենի սոցիալական ճակատագիրը: Արժի՞ դրանից հետո զարմանալ, թե ինչու ոչ մի ձեռնարկության ղեկավար, որն իր կոլեկտիվի աշխատողներին ամիսներ շարունակ աշխատավարձ չէր վճարում, որևէ քրեական կամ վարչական պատասխանատվության այդպես էլ չենթարկվեց: Սոցիոլոգիական հետազոտությունները հավաստում են, որ մանր ու միջին ձեռնարկատերերն ամբողջովին կախվածության մեջ են գտնվում մենաշնորհատիրական ֆիրմաներից:[2] Կախվածությունն այնքան մեծ է, որ ավելորդ է այսօր խոսել մասնավոր ձեռնարկատիրական գործունեության ազատության մասին: Մանր ու միջին ձեռնարկատիրական խավերն ապրում են մշտական լարվածության ու սնանկացման սպառնալիքի պայմաններում: Մանր ձեռնարկատերերի մեծամասնությունը երազում է բացառապես գոյատևելու, ինչ-որ ձևով ծայրը ծայրին հասցնելու մասին: Մանր ձեռնարկատերը սարսափում է մրցակցությունից, քանի որ այն բերում է միայն սնանկացում, տնտեսական կործանում և այդ պատճառով մրցակցության «ազատությունը» ամենևին էլ չի գնահատում որպես սոցիալական բարիք: Տեղին է նշել, որ մանր ու միջին ձեռնարկատիրության հարաբերություններն իշխանությունների հետ միշտ էլ աչքի են ընկել բարձր կոնֆլիկտայնությամբ և վստահության խիստ ցածր մակարդակով: Դա վկայում է տնտեսական և քաղաքական օտարվածության խորը շարժառիթների ու դրդապատճառների մասին: Ձեռնարկատերերի այդ խավի մոտ ձևավորվել է պետական իշխանության, նրա ներկայացուցիչների բացասական ընկալման կարծրատիպը, որը ծնում է սպառնալիքի, թշնամանքի փոխադարձ ակնկալումների մի ողջ փունջ:[3] Սոցիալական շերտավորման խորացումը, անհատապաշտությունը, հասարակության մարգինալացումը և, տնտեսության քրեականացումը, վարքի հակահասարակական ձևերի աճն այն հակամարտության դրսևորումն է, որը մի կողմից առկա է արտաքին, պաշտոնապես ընդունված նորմերի ու ավանդույթների, սովորույթների համակեցության կարգի և,

---

[1] Տես Ильин В.В., Панарин А.С. Рефромы и контрреформы в России: Циклы модернизации процесса. – М., - 1996, с. 78; Мощелков Е.Н. Переходные процессы в России: Опыт ретроспективно-компаративного анализа социальной и политической динамики. – М., 1996, с. 85 и др.

[2] Пиявсева Л. Улучшенный шанс. – М., 1996, - с. 214-215

[3] Оценки политической ситуации и институтов государственной власти. – Информационно-аналитический бюллетень: Социология власти. - № 2, - М.: Изд-во РАГС, 1999, - с. 150-152

մյուս կողմից, մարդկանց անհատական ձգտումների, նախասիրությունների, հակումների միջև: Սոցիալական վարքի ու գործունեության շարժառիթների ու արժեքային կողմնորոշումների ապամարդկայնացումը, սոցիալական և հոգեբանական անոմիայի մասշտաբների պրակտիկ վկայությունն ու հաստատումն է:

Ուշագրավ է այն փաստը, որ ետխորհրդային հասարակություններում սոցիալական կառուցվածքը բնորոշվում է մի կողմից, խոշոր սեփականատերերով, մեծահարուստ օլիգարխներով, գործարարներով, իսկ մյուս կողմից, հասարակության պաշտոնապես ընդունված սոցիալական նորմերից, բարոյական արժեքներից լիովին օտարացած գործազուրկներով, շրջմոլիկներով, մարմնավաճառներով և այլ խավերով:[4]

Այսպիսով ետխորհրդային հասարակության հակասություններն առանձին ուժով դրսևորվում են միլիոնավոր մարդկանց տնտեսական կեցության ոլորտում, որտեղ գերիշխում են գործազրկությունն, աղքատությունն ու տնտեսական ակտիվության անենշան հնարավորությունները:

Անդրադառնալով ամբողջության մեջ վերցված այդ ըմբռնման գնահատմանը, հայտնի հայ սոցիոլոգ Գ.Ա.Պողոսյանը նշում է, որ «... գլխավոր խնդիրն ավելի շուտ նրանում է, որպեսզի հասարակությունը չհասցնել զանգվածային աղքատության, անցումային շրջանի «ցնցումային» տարրը մեղմացնել այնպես, որպեսզի աղքատացումը հասարակության լայն խավերի բաժինը չդառնար, այլ հասցվեր հնարավոր նվազագույնի»: Այնուհետև շարունակելով իր միտքը, ավելացնում է՝ «Անհամեմատ բարդ է պայքարել աղքատության դեմ, որպեսզի այն անդառնալի ու ժառանգվող սոցիալական վիճակ չդառնա բնակչության ճնշող մեծամասնության համար, քան թե զգուշացնել ու կանխել նրա զանգվածային տարածումը»[5]:

Հատուկ նշենք, որ պետական ռեսուրսների հաշվին աղքատության հաղթահարման փորձերը հեռանկար չունեն: Կպահանջվի շեշտակիորեն ավելացնել հարկային բեռն ապրանքարտադրողների վրա, ինչը, կհանգեցնի նոր լճացման, սակայն ավելի վատթար սոցիալ-տնտեսական պայմաններում: Այդպիսի լճացումը կնշանակի պետության խաղաղ վախճան՝ սոցիալական նարկոզի տակ:

Այնպես որ այդօրինակ մոդելի իրացման փորձերը միայն կհանգեցնեն նրան, որ բանկչության նշանակալի մասը ավելի ու ավելի կօտարանա պետությունից:

---

[4] Տես Лиходей О.А. Профессиональное нищенство и бродяжничество как социальный феномен российского общества. СПБ: Изд-во СПГУВК. 2004 – с. 25-50

[5] Ավելի հանգամանորեն տես Погосян Г.А. Современное армянское общество: особенности трансформации, с. 184-185